ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 6
31.08.2020թ. կնքված N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/5-2 գնման պայմանագրի

ք. Երևան «31». 03 . 2022թ.

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և <<ՀԱԷԿ-ի շինարարություն>> ՓԲԸ-ն (այսուհետ՝ Կապալառու), ի դեմս տնօրեն Ա. Վարդանյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, (երկուսը միասին՝ այսուհետ՝ Կողմեր) հիմք ընդունելով ՀՀ կառավարության 17.02.2022 թվականի N 200-Ն որոշումը և **ՀՀ Արմավիրի մարզի գ. Արգինայի միջնակարգ դպրոցի տիպային (մոդուլային) շենքի** կառուցման աշխատանքների կատարման համար Կողմերի միջև 31.08.2020թ. կնքված ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/5-2 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5 և 8.13 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին՝ հաստատել 2022 թվականի վճարման (ֆինանսական պարտավորությունների կատարման) ժամանակացույցը և օրացուցային գրաֆիկը՝ համաձայն Համաձայնագրի N 1 և N 2 հավելվածների:

2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Համաձայնագրի հավելվածներ N 1-ը և N 2-ը բաղկացած են 1 (մեկական) էջից և համարվում են Համաձայնագրի անբաժանելի մասը: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝	ԿԱՊԱԼԱՌՈՒ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե	<<ՀԱԷԿ-ի շինարարություն>> ՓԲԸ
ք. Երևան, Հանրապետության հրապարակ	ՀՀ, ք. Երևան, 0043, Շարուրի 36/2
կառավարական տուն 3	<<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ
ՀՀ ֆինանսների նախարարության	Հ/Հ 11500130861408
աշխատակազմի գործառնական վարչություն	ՀՎՀՀ 04412536
Հ/Հ 900011023570	
ՀՎՀՀ 02565827	
Գլխավոր քարտուղար՝	Տնօրեն՝
_____ Ա. Մկրտչյան	_____ Ա. Վարդանյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
31.08.2020թ. կնքված
N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/5-2 գնման պայմանագրի
31.03.2022թ. կնքված N 6 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ Արմավիրի մարզի գ. Արգինայի միջնակարգ դպրոցի տիպային (մոդուլային) շենքի կառուցման աշխատանքների

ՀՀ դրամ

			Աշխատանքի														
					դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	2020թ. վճարված գումարը	2021թ. վճարված գումարը	հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	**Ընդամենը**
2	45211231/11	ՀՀ Արմավիրի մարզի գ. Արգինայի միջնակարգ դպրոցի տիպային (մոդուլային) շենքի կառուցման աշխատանքներ	64 438 499	240 361 794	-	-	-	127 000 000	127 000 000	127 000 000	255 000 000	255 000 000	255 000 000	320 576 195	320 576 195	320 576 195	**320 576 195**

*Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011023570
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար՝

_____ Ա. Մկրտչյան
(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ՝
<<ՀԱԷԿ-ի շինարարություն>> ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, 0043, Շարուրի 36/2
<<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 11500130861408
ՀՎՀՀ 04412536

Տնօրեն՝

_____ Ա. Վարդանյան
(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված N 2
31.08.2020թ. կնքված
N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/5-2 գնման պայմանագրի
31.03.2022 թ. կնքված N 6 համաձայնագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ*

ՀՀ Արմավիրի մարզի գ. Արգինայի միջնակարգ դպրոցի տիպային (մոդուլային) շենքի կառուցման 2022թ. վճարման (ֆինանսական պարտավորությունների կատարման) ժամանակացույցով նախատեսված ֆինանսական միջոցների շրջանակներում կատարվելիք աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ*

ՀՀ դրամ

N	Գումարը	Կատարվելիք աշխատանքների ներկայացման վերջնաժամկետը
1	127 000 000	30.06.2022թ.
2	255 000 000	30.09.2022թ.
3	320 576 195	20.10.2022թ.
Ընդամենը՝	**320 576 195**	**20.10.2022թ.**

***2022 թվականին նախատեսված մնացորդային աշխատանքների օրացուցային գրաֆիկը սահմանվել է հիմք ընդունելով գնման պայմանագրի ընդհանուր աշխատանքների կատարման օրացուցային գրաֆիկով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետները:**
Աշխատանքների կատարման սկիզբ է համարվում շինարարական աշխատանքների կատարման, տեխնիկական և հեղինակային հսկողության ծառայությունների մատուցման համաձայնագրերից վերջինի կնքման օրվան հաջորդող օրը:

Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011023570, ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար՝

_____ Ա. Մկրտչյան
(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ՝
<<ՀԱԷԿ-ի շինարարություն>> ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, 0043, Շարուրի 36/2
<<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 11500130861408
ՀՎՀՀ 04412536

Տնօրեն՝

_____ Ա. Վարդանյան
(ստորագրություն)

Կ.Տ.

«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ
ЗАО «АРМБИЗНЕСБАНК»
"ARMBUSINESSBANK" CJSC

№ 1891-02

«24» 03 2022

ԵՐԱՇԽԻՔ
(պայմանագրի ապահովում)

1.Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ բենեֆիցիար) և «ՀԱԷԿ-ի Շինարարություն» ՓԲԸ-ի միջև կնքված N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/5-2 պայմանագրից բխող պրինցիպալի պարտավորությունների (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահովում:

2. Երաշխիքով «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել **32,057,620 (երեսուներկու միլիոն հիսունյոթ հազար վեց հարյուր քսան) ՀՀ դրամ** (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց տասը աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի 900008000664 հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքն ուժի մեջ է մտնում տրամադրման պահից մինչև պրինցիպալի կողմից ստանձնված պարտավորությունների ամբողջական կատարման վերջին օրվան հաջորդող քսաներորդ աշխատանքային օրը՝ ներառյալ երաշխիքային ժամկետը կամ առավելագույնը մինչև **31/12/2023թ.**:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/5-2 պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.

2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը.

3) սույն երաշխիքը:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալու հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Վարչության նախագահ՝ Ա. Սարգսյան

Ֆինանսական տնօրեն –
Գլխավոր հաշվապահ՝ Դ. Եդիգարյան

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0010 Նալբանդյան 48: Հեռ.՝ (+37410) 59 20 20, (+37460) 37 25 00: Էլ. փոստ՝ info@armbusinessbank.am, Կայք՝ www.armbusinessbank.am
Адрес: РА, г. Ереван, 0010, Налбандян 48, Тел: (+37410) 59 20 20, (+37460) 37 25 00; Эл. почта: info@armbusinessbank.am; Веб-сайт: www@armbusinessbank.am
Address: Armenia, Yerevan, 0010, 48 Nalbandyan Street; Tel: (+37410) 59 20 20, (+37460) 37 25 00; E-mail: info@armbusinessbank.am; Website: www@armbusinessbank.am

№ 1890-02

«24» 03 2022

ԵՐԱՇԽԻՔ
(որակավորման ապահովում)

1.Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ բենեֆիցիար) կողմից ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/5 ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի արդյունքում «ՀԱԷԿ-ի Շինարարություն» ՓԲԸ-ի (այսուհետ՝ պրինցիպալ) կողմից կնքված N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/5-2 պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման ապահովում (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ):

2. Երաշխիքով «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել **96,172,859 (իննսունվեց միլիոն մեկ հարյուր յոթանասուներկու հազար ութ հարյուր հիսունինը) ՀՀ դրամ** (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց տասը աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի 900008000664 հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքն ուժի մեջ է մտնում տրամադրման պահից մինչև բենեֆիցիարի կողմից պայմանագրի կատարման արդյունքը ամբողջական ընդունվելու օրվան հաջորդող քսաներորդ աշխատանքային օրը ներառյալ կամ առավելագույնը մինչև **31/01/2023թ.**:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/5-2 ծածկագրով կնքված պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.

2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը.

3) սույն երաշխիքը:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալու հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Վարչության նախագահ՝ Ա. Սարգսյան

Ֆինանսական տնօրեն –
Գլխավոր հաշվապահ՝ Դ. Եղիգարյան